



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

894.362

2-66



19 NOV 2011

ՍԵՒՆ-ԱԶԻՄ ՇԻՐՎԱՆԻ

# ԲԱՆԱՍՏԵՂ ԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմ. Թուրքերենից  
Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

Ս. Կ. (Բ) Կ. Կ. ԿԼԿ  
«ԲԱԿԻՆՍԿԻ ԲԱՐՈՉԻ»  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹ.  
1926 Բաղու.

894.3  
Շ-66

Ս. Կ. (Բ) Կ. Կ. ԿԼԿ  
«ԲԱԿԻՆՍԿԻ ԲԱՐՈՉԻ»  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹ.  
1926 Բաղու.

894-362

ՍԵՒԴ-ԱԶԻՄ ՇԻՐՎԱՆԻ

65

7-66

ար

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1/2

Թարգմ. թուրքերենից  
Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

Գրքին կցված կա բանաստեղծ Սեիդ-Աղիմ Շիրվանու կենսագրությունը, կազմված հրատարակչության խմբագրության կողմից:



Ա. Կ. (բ) Գ. Բ. Գ. կից  
«ԲԱԿԻՆՍԿԻ ԲԱՐՈՉԻ»  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

115 JUL 2013

13.850

Տպագրված է  
Ա. Կ. (Բ) Կ. Բ. Կ. ԿԼԵ  
«ԲԱԿԻՆՍԿԻ ԲԱՒՈՉԻ»:  
Կոտայ. հրատ. տպարանում



## ՀԱՋԻ ՍԵՅԻԴ ԱՋԻՄ ՇԻՐՎԱՆԻ

(կենսագրութիւն)

հունիս 28 1835 թ.—Մայիս 19 1888 թ.

Հաջի Սեյիդ Ազիմ Շիրվանի Աղբրեջանի գրականութեան մեծագոյն բանաստեղծներից մեկն է և այդ յերկրի գրական ու հասարակական պատմութեան մեջ, նա յուր գործերով, մի վորոշ պատմական շրջան է բաց արել: Նրա խաղացած դերի մասին ստորև մի հակիրճ տեղեկութիւն կտանք.—

Առայժմ անցնենք նրա կենսագրութեան:

Սեյիդ Ազիմը Շամախեցի յե. նա աշնտեղ ծնվել, աշնտեղ աշխատել և աշնտեղ էլ սպանվել է: Հազիվ 7 տարեկան էր, վոր հորը կորցրեց և անտեր մնացած Սեյիդը, մորը հետը գնաց Դադաստնի Յաքսայ գյուղը Դադի Մուլլա Հուսեյինի (մոր հայրը) մոտ, և մոտավորապես 5 տարի մնաց աշնտեղ: Մուլլա Հուսեյինը վորդի չունենալով՝ Սեյիդին վորդեգրում է և նրա կրթութեան առանձին ուշագրութիւն դարձնելով, նրան արարեբեն, պարսկերեն և թուրքերեն է սովորեցնում: Սեյիդ Ազիմը 11 տարեկան հասակում (1846 թ.) Շամախի յե վերադառնում: Սեյիդը 20 տարեկան հասակում, ուսումը շարունակելու համար իր ժամանակի կուլտուրայի կենտրոն յեղող Արևելքի քաղաքները—Գերբալա, Բաղդադ, Դամասկ, Գահիրե և գնում. նա այդ քաղաքներում տնտեսական վատ պայմաններում մի քանի տարի ապրում է և

ծանոթանում՝ տեղի հայանի գիտնականների և հասարակական գործիչներին հետ: Իր ուսումը վերջացնելուց հետո Շամախի յե վերադառնում, բայց մի քիչ անց նորից պտնւյտի յե գնում գեպի Արարիա: Հաջի լինելը այս անգամ Մեքքա այցելելուց և ձեռք բերել: Չխուսափելով դարու գիտելիքներից, ուշիմ Սեյիդ Ազիմը, իսլամական աշխարհի մեծ մասը յուր սեփական աչքերով տեսնելով, ճամբորդության ժամանակ այդաեղերի ժողովրդների կենցաղը ուսումնասիրելով և քննադատելով, վորպես արդյունք դորա փոխում և յուր աշխարհայացքը, Յեվ դրանից հետո բանաստեղծ Սեյիդ Ազիմը իր ամբողջ բանաստեղծական կարողությունը նվիրեց իր նոր աշխարհայացքի հիմնական սկզբունքների տարածման:

Այդ նոր աշխարհայացքի մեջ բնորոշը՝ պայքարն և կրոնի, մուլաների, բեգերի, խաների և առհասարակ ունեվորների դեմ:

Սեյիդ Ազիմը մեծ հաջողություններ ունեցավ այս պիտատցիայում: Ժողովուրդը, ավելի ուղիղ, ժողովրդի ցույց աված ջերմ, բայց թաքուն համակրանքը նրա այդ գործունեյության համար, ավելի եյին վոգեվորում նրան այդ պայքարում: Որինակի համար նախեցեք, ինչ քաղցր, պարզ ու ազատ լեզվով Սեյիդը վերում և մի Մուլլայի մտախն, յերբ ուղում և հրապարակել նրան, վորի գործի հետ միայն յերեկն և վոր ծանոթացել և,—

Ե՛յ, ժողովուրդ, գիտցիր, սա մի հրաշալի Կրույց և,  
Վոչ սուտ և, վոչ պարսավանք և վոչ էլ կստակ.

Մի ասի, թե բանաստեղծի խոսք և, վտանաավոր և,

Գաղաքում պատահած սա մի դեպք և իսկական:

և այլն, և այլն.

Սեյիդ Ազիմի բանաստեղծությունները ձեռքից-ձեռք եյին անցնում և տպագրությունից ու լրագրից գուրկ այդ վայրում վորոշ հասարակական սպանանք եյին առաջացնում: Նրա վո-

տանավորները յերկրում առաջին անգամ հասարակականություն առաջ բերող գրական գործերը պիտի համարվեն: Նոր մեթոդով թուրք զպրոց բաց անելու առաջին նախաձեռնողներից մեկն և, և դրանց շարունակելի դարձնելու համար նա անհատապես մեծ դոհողություններ և հանձն առել:

Միշտ նույն Սեյիդ Ազիմը աշխատում և դասագիրք կազմել թուրք լեզվով, իր զպրոցի ամենորջա աշխատանքների համար կազմելով առաջին անգամ բանաստեղծական հեքիաթներ: (Կատուն և մուկը, և այլն): Նրանք այնքան գրավիչ եյին, վոր ընդունվեցին նույնիսկ խալիֆայական—մուլլայական զպրոցներում: Բանաստեղծությունների համար նա ընտրել ևր Սեյիդ կեղծանունը, նրա ամենահայանի կեղծանունը նույնպես Սեյիդ և:

Սեյիդի գրական—լուսավորական գործունեյությունը զուգադիպում և իր յերկրի վերածնունդի առաջին բողբոջների հետ: Այդ ժամանակ Ազրբեյջանում «Մուսուլմանական բարեգործական ընկերություն» անունով առաջին կուլտուր-կրթական ընկերություն և կազմվում. «սերմնացան» (եքինջի) անունով առաջին թերթը լույս տեսնում, նոր մեթոդներով առաջին զպրոցներն են բացվում, առաջին նոր դասագրքերն են կազմվում, առաջին թատրոնն և կազմակերպվում, առաջին տպարանն և հիմնվում, և այլն, և այլն: Կարճ, ամեն բանի սկիզբն և դրվում և հիմնվում՝ նոր հասարակական կյանք: Հասկանալի յե, վոր նոր հասարակականության պիտեներները պետք և հանդիպելին առաջին և հետևվարար ուժեղ հարվածներին:

Այս դարեղջանի զեկավարը Հասան բեգ Մելիքովն և (Զարգարի), Սեյիդ Ազիմի գործունեյությունը այս ասպարիզում շատերից չի հասկացվել և նույնիսկ այժմ կան մարդիկ, վորոնք Սեյիդ Ազիմին համարում են Երդերիլի մուշտակի և մեկ թաղարցորենի խաթրու գեղեցիկ ներքող և կամ կեղտոտ պոռնագրափիա



գրող քեֆչի բանաստեղծ: Սույն պրակի հայերեն թարգմանությունից հետո վստահ ենք, վոր Սեյիդ Ազիմի մասին յեղած նրման կարծիքը աստիճանաբար կանհետանա. հայերեն հրատարակվող այս պրակի մյուս արժանիքն էլ այն է, վոր այստեղ մտել են դեռ թուրք լայն մասսաներին անձանոթ նրա վոտանավորները:

Միջին դարերի կյանքով պարող Ադրբեջանում հասարակական կյանքի ստեղծումը ամենուրեք նույնը չէր: Նորարդրոջ շարժման կենտրոնը համարվում էր Բագուն, սակայն Սեյիդ Ազիմը միայն հեռվից-հեռու գրչով էր մասնակցում այդ գործի նախաձեռնության: Բայց իր պարած քաղաքում, Շամախիում, հնության կոմնակից ամենաբիրտ և ամենաանմաքուր խմբակներում, նա մեն մենակ պիտի պայքարեր և պայքարեց:

Սեյիդը իր կյանքի մեծ մասը կիսաքաղց և անցկացրել և վաղվան ուրը միշտ սպառնացել է նրան (նրա զրական միջոցների աղբյուրը ուսուցչութունն և յեղել զանազան դպրոցներում): Վերջապես մեծ բանաստեղծի կյանքում ստացած տանջանքները պսակվեցին նրա մահով: Նրա բանաստեղծությունների պատճառած վախը շատ լավ հասկացող մուլաները, մի ուրբաթ ուր, մըզկիթից դուրս գալու ժամանակ, միտումնավոր (ըստ յերևույթին իբր թե պատահաբար) իրարանցում առաջ բերին, նրան գետին գլորեցին և ժողովրդի կողմից վոտնակսի արին, Սեյիդը սրանից էլ մահացավ:

Սեյիդ Ազիմը ըստ տեմպերամենտի տաքարյուն մարդ էր և այլ կերպ ֆիզիքապես նրան հաղթել համարյա անհնար էր: Մուլաների և կրոնի դեմ բռնած իր դիրքում, Սեյիդ Ազիմը, իր կյանքի վերջին ուրերում ավելի ամուր և ավելի համառ դարձավ: Նրա քննադատներն ու գնահատողները կարող են գտնել, վոր նրա նոր աշխարհայացքի ամենակարեոր և վճռական մասերը,

իրենց թեորեաիկ—սկզբունքային հիմնավորման մեջ, վերջին յերկասիրությունների մեջն են ամփոփված:

Վորքան սև ուժերը սպառնալի էլին դառնում, այնքան նա իր հաստատակամության մեջ կատարելագործվում՝ և իր համագմունքի թույլ կողմերը ուղղելով՝ ուժեղանում էր: Այնպես վոր Սեյիդ Ազիմի բանաստեղծությունների մեջ արտահայտված խոր փիլիսոփայական և այլ մտքերը այն աստիճան մեծ դիտական պաշար են հայտնաբերում նրա մոտ, վոր հավատալ չի գալիս, թե այդ բոլորը գրվել են միայն եքսպրոմտով, ներշնչմամբ, յենթադիտակցորեն:

Սեյիդ Ազիմը մեծ բանաստեղծ է և միևնույն ժամանակ մեծ հեղափոխական և նրա ամբողջ հեղափոխականությունը նրա մեծ բանաստեղծ լինելուց է բղխում:

ՄՈՂԱՆ ՈՒ ՀԱՋԻՆ

Շահ-սեվանների գյուղական երկրում  
Սաշնարած, հարուստ հաջին եր ապրում:

Ուներ սա ուղտեր, ձիեր ու վոչխար  
Յեվ մի գամփո շուն՝ անունը Բոզլար:

Հոտին պահապան, գիշերներն անքուն—  
Հաջուն ոգնական, հանգիստ իր հոգուն:

Բոզլարն էլ չկա. ափսոս վոր մեռավ.  
Բոզլարի վրա հաջին սուգ արավ:

Լվացին շան դին, պատանք կարեցին.  
Գերեզմանոցում շիրիմ կերակեցին:

Յոթ որ, յոթ գիշեր քելեխ բաժնեցին.  
Ղորանից սուրա, աղոթք կարդացին:

Ու ինչ սուգ շիվան, և ինչ բազմություն . . .  
Աստված Բոզլարին թող տա փրկութիւն:

\* \* \*

Այս գեպը լսեց զառամյալ մողան.  
Գոչեց, սպաննաց՝ փրփուրը բերան:

«Ո՛վ դու ժողովուրդ, քո դեմքին՝ արատ.  
«Նորտակվեց մեր հին, սրբազան Շարխաթ:

«Նուժանը պղծեց կրոնն ու Իսլամ.  
«Թողեք վոր հիմա հեկեկամ ու լամ:

«Մի փիա շան համար որենքներս կորան.  
«Ձեռքից գնացին Շարխաթ ու զորան:

Ու հեծավ իր ձին ու բռնեց ճամբան,  
Վոր ցույց տա հաջուն անեղ դատաստան:

\* \* \*

Դեռ չե՞ր ավարտել խորամանկ իր չուն—  
Խաբարը տարան, հասցրին հաջուն:

— Գալիս ե մուլան, լսիր, էյ հաջի.  
Գալիս ե՛ մի լավ գոռա ու հաջի:

«Ինձ համար, տղերք, հեչ դարդ միք անի.  
«Մոլլան, լավ գիտցեք, մի կենտ միտք ունի:

«Իմ հոտից հիսուն վոչխար դուք ջոկեք  
«Ու մոլլի ճամբին հանգիստ սպասեք:

Ու ինքն ել իսկոյն յելավ ընդառաջ.  
Մոլլին վոր տեսավ՝ քաշեց խոր հառաջ:

«Ո՛վ դու իմամի յերկրիս պահապան,  
«Իմ հերն ու մերիկ քեղ լինեն զուրբան:

«Մեջքս կտարվեց. ավանդ իմ շնիկ.  
«Թող վոր քանդվի իմ տուն, ընտանիք:

«Ղոչաղ եր Բողլար, զգաստ եր, առույգ.  
«Թաթերն՝ առյուծի, աչքերը՝ խարույկ:

«Գազաններն նույն իսկ չեին մոտենում.  
«Ձայնը լսելիս՝ լաց եին լինում:

«Գիշեր ու ցերեկ, ծարավ, անոթի,  
«Հովիվն եր արթուն իմ ամբողջ հոտի:

«Փողիս ե մուլքիս տերն ու տիրական—  
«Փառքիս ու պատվիս պատճառ սիրական:

«Ինչքան յերախտիք ունի ինձ վրա,  
«Պատանքս, ասաց, արբեշում արա...

«Կտակը նրա սուրբ եր ինձ համար:  
«Կտակն անդրանիկ տվավ Ձեզ համար.

— Հիսուն հատ վոչխար մոլլա—հայր սուրբին...  
Իմ մահից հետո դրեք իր ճամբին:

Կտակի մասին մոլլան վոր լսեց,  
Այս անգամ արդեն ուրիշ յերգ յերգեց:

«Բողլարը հո շուն—հայվան չե՞ր անբան.  
«Մեկն եր մեզանից, մենք նրան զուրբան:

«Ասծու որհնուեթյունն վրան միշտ լինի:

«Ասխարի Կախֆ շան բարեկամ լինի: //

Ու նա զորանից մեռելոց Նասին

Մըթմըթաց. ու շատ վողրաց շան մասին:

## ՉՈՒՄՆ ՈՒ ՄՈՂԱՆ

Չորանը տեսավ՝ հեռվից դեմ առ դեմ  
Մողան և գալիս ուրախ, խնդադեմ:

Չորանը ալլահ, մողա չեր սիրում.  
Չորանի գլխում նոր միտք եր յեռում:

Թուով ու կանգնեց մողայի ճամբին.  
Մահակը բռնած վերև դեպ արփին:

«Հերիք ե, մողա, մարդկանց հետ խաղալ.  
«Հերիք ե ինչքան խաբես դու, դաղալ:

«Շեյթանն և ասում.—մեկ խփիր ուժգին,  
«Մողայի բկից դուրս թռնի հոգին:

— Դու դեռ սպասիր, եյ չորան գյադա.  
Մարդ ել շեյթանին մի՞թե հավատա:

Նա չեր Ադամին քշեց դրախտից.  
Նա չեր, վոր զբկեց մարդուն իր բախտից:

Դե հապա կարդա սուրբ գիրքը զորան—  
Շեյթանը մեզ միշտ յեղել և դուշման:

Ուշքի յեկ, ախմախ, թող եզ հարամին.  
Յեղիր հնազանդ, լսիր Ալլահին:

Չորանը նրան. «Մոլլա, այ մոլլա.

«Գետինը մանեա, նզովի ալլահ:

«Շեյթանն աղանջիս ասում ե հիմա.—

«Մոլլին ջուխտ վոջխար փեշքեշ դու արա:

Մոլլեն վոր լսեց, գոչեց բառաբառ.—

Ահա սրբազան, անմահ գաղափար:

Մեկ-մեկ ել պիտի լսել շեյթանին,

Մարմինն ու հոգիդ վոր հանգիստ լինին:

ՏՈՒՂԱԲՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Թե ասովածային լինի գիտնական—

Դու նրան, վորդիս, յեղիը դռնապան:

Յես ինքս իմ մեջ կրում եմ աշխար.

Բայց ե գիտունին թող լինեմ նորար:

. . . . .

Սակայն քեզ պատմեմ մի գեպք, մի ասակ.

Խորամանկ մարդիկ գնում են Իրակ:

Ճամբա են ելնում գեպի Իսպահան.

Վոմանք գեպի Յեզդ, վոմանք Բեհրեհան:

Վոմանք ել նույն իսկ գեպի Քերբալան,

Ուր նրանց, լսիր, կանչել ե Ալլահ:

Հինգ վեց թերթ գրքից հազիվ թե կարդան—

Մորուքներն արդեն թողնում են փարթամ:

Ու ասուլարն աջնտեղ, անտես, Իրակում

Սիգա, մաթա-ով արբում ե . . . գրկում . . .

. . . . .

2589  
38



Թե տանջվում ե նա սեռապես անուժ,  
Խմում ե մի դեղ, ստանում նոր ուժ:

Յերեկը անգիր սիգա թե կրկնի—  
Գիշերը նազլի կանանց կգրկի:

Դորան ե կարգում ամեն մի դեպքում,  
Հազար սուտ կեղծիք՝ տուլարի կրճքում:

Յեթե փող չունի, քաղցած ե այդ որ—  
Նամակ ե հյուսում գրիչը ստոր:

«Ով դու ժողովուրդ իմ աղից յերկրի,  
«Ճգնում եմ, ահա, տամուհինդ սարի»:

«Գիշեր ու ցերեկ սրհնում եմ Ասծուն,  
«Ապրում եմ վսեմ կյանքով իմաստուն»:

«Գիշերներն այնտեղ, Խուլլի Կաֆի—  
«Ձեզ այս գիտությունն անշուշտ պիտ բավի»:

«Իմ խոսքը յերկրում շողշողաց՝ արե,  
«Յեւս՝ յես յերկինք, ասաղերին բարե»:

«Յես ամենագետ, յես եմ իմ դարում,  
«Ինձնից իմաստուն չկա աշխարհում»:

«Ո՞վ պիտի հասնի փառքիս գիտության,  
«Փախրի Բաղիներ՝ վոտքիս պատվանդան»:

«մեն տեղ հիմա անունը իմ սեզ,  
«Ձեր աչքերը լուս, գյուտերս տեսեք»:

«Վերագարձը իմ պիտի դանդաղե—  
«Գրում եմ, գրում յես նոր բխարե»:

«Ձեր ամեն մի տուն՝ հազար մի բարիք,  
«Ուղարկեք ինձ փող, խեղդում ե կարիք»:

«Ձեմ կարող նույն իսկ մի հատ մոմ առնեմ,  
«Վոր մութ գիշերին մտքերս շարեմ»:

«Յույց տամ՝ թե ինչքան դժվար ե ճամբաս—  
«Գիշերներն անքուն, ցերեկը՝ ծոմ—պաս»:

«Մարդ մի՞թե մնա այնքան անտի՛ի,  
«Վոր մինչեվ անգամ չայը կարոտի...»:

Ու իր քաղքցիք յերբ այս կարդացին—  
Տղամարդ թե կին կրակ կտրեցին»:

Ամեն մի անից արծաթ ե վոսկի  
Ու հետը մի գիր. «Մի՛ վախի՛ր իսկի»:

«Ինչքան ել մնաս՝ վոսկին սաացիր,  
«Քո սուրբ գյուտերով մեզ մի՛ մոռացիր»:

Տուրան այն որից, վոր առավ վոսկին—  
Սիգա ու նազլին սկսեց կրկին»:

ՄՈՒՇՏԵԻԿԸ ՈՒՍՈՒՄԻՅ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Ե  
ՀԱՅՐԵՆԻՔ

Գեղեցիկ մի որ չորս-կողմ, ամենուր,  
Բերանից բերան տարածվում ե լուր:

Թե, ուսումն առած, գալիս ե հիմի  
Մի նոր փոխանորդ վսեմ իմամի:

Գոռում ե խոսոտ, գոռում մունետիկ.  
Փողոց են թափվում անհամար մարդիկ:

Կանգնել են շարքով ձախից ու աջից.  
Ազոթք ե հնչում ամենքի շուրթից:

Նա փառք ու պատվով մտնում ե քաղաք.  
Ձեռ—վոտն են պաչում, ու ի՜նչ աղաղակ:

Մուշտեիզն հպարտ անցնում ե դանդաղ.  
Յոթ որ, յոթ գիշեր ամեն տեղ մատաղ:

Գանձերը փեշքեշ հոսում են առատ,  
Խնջույքին ձառեր՝ կիսատ ու պոսատ:

Մուշտեիզն իրենց հովիվն ե արթուն.  
Ու նրա համար շինում են նոր տուն:

Հեռատես մաքով խորհում են կրկին,  
Վոր մուշտեիզին հարկավոր ե կին:

Ձուրում են ջահել աղջիկը սիրուն.  
Շեյթանին հրեշտակն ընկեր են բերում:

Իմամը արդեն հասել ե փառքի.  
Մեչետ ե գնում վսեմ ազոթքի:

Ձուգվել ե թագա հարսի պես հիմա.  
Աչքերին սե-սե քսել ե սուրմա:

Գյուլար վարդաջուրն յերես ու մուրքին.  
Լաալ ակնեղեն մատնիքը ձեռքին:

Յելել ու գլխին փաթթել ե տյուրբան.  
Ամենքն իմամի բաշմակին զուրբան:

Հյուսվել ե բկին պոչը տյուրբանի.  
Վոր ձիգ տաս մի քիչ՝ հողին կհանի:

Ուսերին առած նրբահյուս աբա.  
Ձեռքումն ել շքեղ գավազան սաս:

Մորուքին հինա, իր գլխին տյուրբան.  
Մատներին մատնիք, ձեռքում գավազան.

Վոտներին նոր-նոր պսպղուն բաշմակ.  
Մեծ մարգարի թամամ աներձագ:

Ահա նա տնից մեչետ ե գնում.  
Սուֆիներ ազնիվ իր դեմն են յելնում:

Դեպ աջ, դեպի ձախ դիտում ե իմամ.  
Տեսնի թե իրեն տալիս են սալամ:

Կանգնում ե մի պահ մեջետի շեմքին.  
Անցնում ե միհրար սրբազան բազին:

Նամազ ե անում. քնել են արդեն.  
Յեզլ յեղնում ե նա ճառի կաֆեդրեն:

Իր սուրբ քարոզով երկինք ամբարձած —  
Խոնարհ ձայնիկով մրմնջում ե ցած:

Յեզլ ապա վերջում զորանից մի տալ  
Հուստորը շնչով հնչում ե դանդաղ:

«Լսիր, ժողովուրդ, գաղտնիքը իմ մեծ.  
«Գիտություն—շարիաթ իրար հեռ ձուլվեց:

«Իմ միտքը ովկիան ու լայն՝ ծովի գեմ.  
«Մուլա-Սեդրայից ավելին գիտեմ:

«Թաթախվեք իմ այս ծովում միասին.  
«Վոր իմ գիտությամբ հասնեք մուրազին:

«Գրել եմ բոլոր հարցերն հիմնական.  
«Պարզել եմ ամբողջ սուրբ գիրքը զորան:

«Հին մեկնություններն յես շատ փոխեցի.  
«Ծանոթություններ՝ նորից գրեցի:

«Միտլ ե արել նույն իսկ Բեյզավին.  
«Յեզլ յես ուզեցի սխալն հիմնովին:

«Շեղվել ե ճամբից ե Ֆեխրի-Բազին.  
«Հանցանք ե այսոր լուել այդ մասին:

«Մուլա-Ֆեախ-Ուլլան չունի վոչ մի գյուտ.  
«Նա մոլոր ու սին գրել ե անհյուսթ:

Մուշտեխին այսպես տակից ու վլսից  
Հազար հիմար բան փչում ե խելքից:

Ամբոխն ել ագետ բացել ե բերան,  
Արմանք ու դարմանք լսում ե նրան:

Իմամը վոր կա՝ բարձր ե ամենից.  
Սա լավ ե նույն իսկ շեյխ-ուլ-խսամից:

Սակայն խելահաս մարդիկ մի քանի  
Գիտցան թե ուրից փչում ե քամի:

Տեսան, վոր դատարկ պարծենկոտ ե սին.  
Բայց ե յերկյուզից այն որ լուեցին:

Յեզլ մեկը չկար, վոր ասեր. — Իմամ,  
Հերիք սուտ ու մուտ բարբաջես անհամ:

Ասենք թե նույն իսկ գիտուն ես հակա.  
Սակայն քո խելքից մեզ մի ոգուտ կա՛:



Այն վճիռ տգետին գիտուն շինեցիր.

Այն վճիռ հիվանդին ցավից փրկեցիր:

Այն վճիռ կույր աչքին դու լույս բաշխեցիր.

Այն վճիռ մեռածին վոտքի հանեցիր:

Դու յեկքը, ճամբեն, ցույց տուր Իսլամիդ.

Գետինը մտնես, ախմար մուշտեիդ:

Հեռագիրն, ասիր, հնարեց շեյթան.

Յեզվ յերկաթուղին գտավ սատանան:

Խաչապաշտ ազգերն առաջ դիմեցին.

Ո հիմար իմամ, մեզ յեա թողեցին:

Ավետարանով աշխարհը առան.

Իսկ դու դեռ կանգնել, մեկնում ես դսրան:

Հեծում ե ցավից ժողովուրդն իսլամ.

Քո մեղքն ե, գիտցիր, շողջողուն իմամ:

Քեզնից չտեսանք վոչ մի ոգնութիուն.

Թող գոնե գտնենք մի այլ գիտութիուն:

Հերիք ե ինչքան դու մեզ խարեցիր.

Կոպեկի համար հոգիդ ծախեցիր:

Գիտես, վոր մանուկ, չորան ու գյադեն

Ամենքն ել քեզնից ավելի գիտեն:

Ն Ի Մ Ա Ր Ղ Ա Ջ Ի Ն

Մի շատ պատվելի դագի եր ապրում.

Մի որ, իրիկուն, նա գիրք եր կարդում.

Ու մեկ ել, հանկարծ, ինչ տեսնի զազին. —

Ասես տեղնուտեղ հենց իրեն մասին:

«Յերբ վոքրիկ գլուխ ե յերկար մորուս—

«Այդ մարդը, գիտցեք, հիմար ե, թերուս:

Մտածեց զազին.— Ինչպիսի ամոթ,

Թե մարդիկ տեսնեն՝ յերկուսն ել ինձ մոտ . . .

Ու շատ դարդ արավ: Ինքն ել իր հերթին

Այս բանը պատմեց իր աշակերտին:

Աշակերտն ասաց.— Ո՛վ դու մեծ իմամ,

Դրանից, ի դուր, մի տխրի անգամ:

Չե որ քո գլխում՝ ամեն գիտութիուն.

Փռոսանեղ դեմքիդ՝ վորքան վեհութիուն:

Շարիաթը ե թե յուրիսպրուդենցիան

Մորուսի խնդիր բնավ չունեցան:

Գյավուրն ե, անշուշտ, գրում այդ մասին.

Մարդ ել հավատո՞ւ ավել-պակասին:

Յեզվ յերկրորդ անգամ սրբազան զազին

Նորից, պատահմամբ, կարդաց այդ մասին:

«Հեյ—վախ, ինձ ազնոյ, անբախտ եմ վորքան,  
«Ցնդվում եմ արդեն... նշանները կան...»

«Թեև երեսանց դովեց ինձ յերեկ.  
«Տանջվում եմ, սակայն, գիշեր ու ցերեկ:

«Թերուս եմ, տգետ, հիմար եմ ու չար.  
«Պետք է վոր փնտռեմ ու գտնեմ մի ճար:

«Գլխիս կփաթթեմ յերկար մի տյուրբան.  
«Իմ այդ մեծ գլխին ամենքն ել դուրբան:

«Թե խուզեմ, նույնպես, կեսը մորուքիս—  
«Չքվի-չորանա և վիշտը դեմքիս:

«Թե վոր չունենամ յերկար յես մորուս,  
«Ո՞վ է ասելու,—Հիմար ե, թերուս:

Ու չափեց զազին. ու բռնեց մի թիղ.  
Բռնեց, որ կտրի մորուսից մի թիղ:

Շատ վոր ման յեկավ, չգտավ մկրատ.  
Ղազուն թող լինի սա մի լավ խրատ...»

Մորուքը տարավ լամպին դեմ արավ,  
Վոր բոցը մեկեն մորուքը առավ...»

Ել մորուս ասես, ել յերես ու աչք...  
Աչքը չբուցավ՝ այդ ել մի հրաշք:

Դեմքին բշտիկներ, քյոսա, անմորուս,  
Քյաչալ է զազին, հիմար ու թերուս:

## ՄԱՐԴԻԿ ԳԱՆԳԱՏՈՎ ԳՆԱՅԻՆ ՅԵՐԿԻՆՔ

Բռնություն ու լուծ, արքաներ տիրան,  
Հեծում եր աշխարհ, հեծում և Իրան:

Իրան ու Թուրան, ամենքն ել թող լան—  
Ամեն տեղ բիրտ մահ, ամեն տեղ թալան:

Թալան ու մահի, զուլումի տարին  
Գյուղացիք յեկան ու խորհուրդ արին:

Ճար կա՞ թե ուխտի երկինքը գնան,  
Ալլահը կանի մի գեղ ու դարման:

Ընտրեցին մոլի գերվիշ, մենավոր,  
Մաքուր փեշերով և սուրբ ճգնավոր:

Սրանք ել յեկան ու յերկինք հասան.  
Շուրթերին ադոթք Իսմի-Ասադամ:

Տեսան, վոր Ալլահ—արքան յերկնային  
Ալեհեր մորուս, պառավ եր նա հին:

Պառկել եր անուժ արեի տակին,  
Չորս կողմը շարած լալիշ-մութաքին:

«Ալլահ, դու Ալլահ, գթա գեթ հիմա.  
«Լցվել է աշխար կողոպուտ ու մահ:

«Հանգիստ հո չունինք, ցավերս ել անթիվ.

«Չը մնաց հարգանք, չը մնաց պատիվ:

«Քո փառքի համար մի ճար դու արա.

«Խավարեց մեր կյանք, մենք գյուհի—գարա:

Ալլահը ասաց.—Ո շատ տանջվեցի,

Մինչև ամենքիդ յես կյանք տվեցի:

Հիմա ուժասպառ ծերուկ եմ անճար.

Ձեզ համար, արդեն, չունեմ վոչ մի ճար:

Այստեղ, յերկնքում, քնում եմ միայն,

Վոր հանգչեմ, մոռնամ աշխարհը համայն:

Աշխարհը տվի վորդուս, Հիսուսին.—

Հոգսերս բոլոր առնի իր ուսին:

Անցեք նրա մոտ. թե խնդրեք համառ,

Նա մի ճար կանի ձեր ցավի համար:

Ու պատվիրակներ նոր-նոր ճամբքում.

Գտան Հիսուսին չորրորդ յերկնքում:

Պատմեցին նրան դեպքեր մանրամաս.

Խնդրեցին մի ճար՝ ապրեն անվնաս:

—Եյ դադալ խուժան, վոր չունես ամոթ,

Ինչո՞ւ դու այսոր յեկեկ ես իմ մոտ:

Իջն՝ յես աշխարհ, վոր տամ փրկություն.

Իջն՝ յես աշխարհ, վոր տամ խնդություն:

Բայց ինչո՞ւ դուք ինձ արիք ավարա.

Ինչո՞ւ դամեցիք խաչփայտի վրա:

Աչերը իմ մոր՝ պղտոր այն որից.

Արցունքը մինչ արդ կաթում ե նորից:

Ու ազնիվ, պայծառ մորքուրիս վորդին... .

Սղոցով մաս-մաս կտրեցիք իր դին:

Չթողիք հինգ որ՝ թե շունչ մենք քաշենք,

Կերտենք ճշմարիտ կեանքի մի նոր շենք:

Դուք խուլ մնացիք մեր ազոթք յերգին.

Ու վերջ ի վերջո յես փախա յերկին:

Ուզում եք կրկին, վոր իջնե՞մ յերկնից.

Ու դուք ինձ բռնեք ու խաչե՞ք նորից:

Ձեր նիստ ու կացին արդեն իրազեկ—

Ձե, չե, դուք բնավ ել մի յերազեք... .

Թե յես, մարդկության խասիաթը մոռցած,

Խաղաղ յերկնքից իջնե՞մ դեպի ցած:

Ուզում եք սատկեք, դե հեռու կորեք,

Ձեր հիմար զլխի ճարը դուք արեք:

ՏԳԵՏ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿԱՇԱՌՔԸ ԱՍԾՈՒՆ

Մինչև իսկ այսօր Համազան յերկրում  
նավար ու ազետ մի խալիս ե ապրում:

Մի խալիս, վոր նման մեր գյուղին Լահիչ,  
Լա—թարգմանիր—վոչ, հիչն ել արզեն հիչ:

Ու հիչ, մի տարի, անձրև չտեսան.  
Վոչ խոտ, վոչ դարման՝ կովին ու յեղան:

Ու ժողով արին. ժողովը՝ լեցուն.  
Գյուղացին ուզեց կաշառի ասծուն:

—Ալլահը դե չի հավատում խոսքի.  
Անձրև ես ուղում՝ հավաքի վոսկի:

Ու բերին արծաթ, վոսկիները հին.  
Բերին դեմառդեմ գյուղական քեռիովին:

Քեռիովեն ել առավ, ընկավ ճանապարհ.  
Հովիտ, սար ու ձոր, դաշտեր, առապար:

Անապատ ու շեն, քաղաքներ քանդված,  
Ինչքան ել վնտուեց՝ չգաավ ասաված:

Ու մեկ ել, հանկարծ, ճամբին հեռավոր  
Դեմ յելավ նրան շքեղ ձիավոր:

Եմիրն եր հարուստ՝ Շահուսթաների.  
Յեկել եր այդ օր պտույտներ անի:)

Ձեռքերում բազեն՝ յերկաթե կտուց.  
Յերկու շուն—թաղի՝ շորերը վոսկուց:

Ալլահն ե, վոր կա.—խորհեց գյուղացին.  
Ալլահ ճար կանի իրենց վիշտ-լացին:

Ու վազեց առաջ ու ընկավ գետին.  
«Ո՛ր, գթա, Ալլահ, քու ժողովրդին:

«Յերկրի ու յերկնի, ծովերի դու Տեր,  
«Քեզ են աղերսում քյասիր քո ճուտեր:

«Քեզ համար կաշառք բերել եմ վոսկի.  
«Մրանից ավել՝ ել չունենք խակի:

«Բաշխիր մեզ անձրև, սվ դու բարերար,  
«Թե չե կխանձվի մեր բերքը արար:

«Անիծում ենք քեզ Գարբել հրեշտակով,  
«Վոր բռնել յես պինդ քո եզ սուրբ ձեռքով:

«Անիծում ենք ջուխտ մահիդ հրեշտակով,  
«Վոր լուռ, վոսկեշոր կանգնել յեն քու քով:

«Հույսից մի գրկի. գթա մեր հալին.  
«Մեր հույս-կողպեքի աուր մեզ բանալին:

Եմիրը վերից ժպտաց անխելքին.  
Սիրով վեր առաւ արծաթ ու վոսկին:

«Ընդունում եմ յես կաշառքը գյուղի.  
«Լավ եք մտածել, ել հեշ միք վախի:

«Ամպերը շար-շար իրար կկապեմ,  
«Ուրբաթ՝ ձեր գյուղին անձրև կլծափեմ:

Ու քեռխովեն շտապ դարձավ դևպի տուն.  
Տգետ գյուղացուն ո ինչ խնդություն...

«Տեսա՞ Ալլահին. փնռք իր բարձունքին.  
«Տեսա իր ձեռքում Գարբել հրեշտակին:

«Յերկու ազրախի սրով արնակաթ.  
«Թաթերն՝ առյուծի, ատամներն յերկաթ:

«Ու հենց վոր տեսա՝ մթնեց լուս աշխարք.  
«Յես ծունկ չոքեցի ու տվի կաշառք:

«Կաշառքը, թեև, քիչ էր, անարժան.  
«Բայց նա ընդունեց ու ժպտաց այն ժամ:

«Ասաց, որ յերկինք ամպով կպատի.  
«Ուրբաթ որ, անշուշտ, անձրև կլծափի:

Ուրբաթ, պատահամբ, մութ ամպը յելավ.  
Անձրև ես ուղում՝ հեղեղ ե, սելավ:

Կոտորվեց վոչխար, քանդվեց խրճիթ, արտ.  
Գյուղացոց համար ինչ սուգ ու ինչ դարդ:

—Մարդ ել Ալլահին տա հազար թուման.  
Վոր խելքը թոնի, կապի սև դուման:

Ի հարկե, այնքան կաշառք վոր առնի,—  
Նաշաղիր դեղից՝ աշխարք կխառնի...

ԱՍՏՂԱԳԵՏ, ՎՈՐ ԿԻՆԸ ԳՏԱՎ ՈՒՐԻՇԻ ՀԵՏ

Կար մի գիտնական, մի հին աստղագետ.  
Ասում են վոր նա հմուտ, կետառկեա —

Արև մուրակ, լուսին, Յուպիտեր,  
Գիսավոր աստղեր, ամենն էլ գիտեր:

Թե մութը շողա, թե ասուպ ընկնի —  
Լսեք մի առ մի գաղտնիքը յերկնի:

Մի որ մեր գիտուն յեկավ դեպի տուն.  
Կնոջը տեսավ ուրիշի գրկում:

Ել ինչ հայհոյանք, ել ինչ նախատինք.  
Ազմուկի վրա թափվեցին մարդիկ:

Կոխվը տեսան. դեպքը լսեցին.  
Աստղագուշակին այսպես ասեցին.

«Եյ դու, խայտառակ, աստղերի գիտուն,  
«Ձե՞ վոր գիտեիր կյանքը խմաստուն:

«Ու ինչ՞ու էք եղ պոչատ կոմեոտան  
«Ձը պատմեց, մեկ-մեկ, գաղտնիքը քո տան:

«Ճանաչիր կնկադ, քիչ էլ մեզ լսի.  
«Յերկնքի մասին՝ ել հեչ մի խոսի:

Յեվ քեզ, ժողովուրդ, հայտնի և արդեն,  
Վոր այդ մարգարեք ստախոս մարդ են:

Դու ել «գիտունից», Սերի, հեռու կաց.  
Խորհուրդը կյանքի մեզ դեռ մութ մնաց:

ՇԱՀՆ ՈՒ ԱՅԳԵՊՍՆ

Շահնշահ մի շահ հեծավ նժույգ ձին.  
Վորսի եր գնում վաղ լուսաբացին:

Սլացավ արքան տիեզերական.  
Հանկարծ դեմ յելավ մի խեղճ այգեպան:

Վախեցավ մեկեն, խրանեց նժույգ ձին.  
Ու շահն աշխարհի գլորվեց գետին:

Բայց շահը յելավ, գոչեց ֆերրաշին.—  
Կապի տեղն ու տեղ, պըլոկի կաշին:

Արցունքն աչերին աղերսեց ֆակիր.  
«Ո շահ, իմ աչերն հավեա մի փակիր:

— «Լսիր դու սարուկ, հեռու իմ ճամբից.  
Այ քեզ վոր տեսա՝ ընկա յես թամբից:

«Լսիր ինձ, իմ շահ, այս լուսաբացին  
«Յես ել տեսա քեզ և մեկ ել քո ձին:

«Ճիշտ ե, վոր վախից՝ ընկար նժույգից.  
«Բայց բան չը պակսեց քո իսկ յեղունգից:

«Հապա մտածիր.—վայել է շահի,  
«Վոր տա զուր ֆերման—հրամանը մահի:

«Թե սե հանդիպում քեզ հեա չլիներ,  
«Հաղիվ թե աջալ—իմ մահը հասներ:

ՓԱԴԻՇԱՀԻ ՀԱՆԱՔԸ ՆՈՒՍՐԻ ՀԵՏ

Ամբան որ եր, այնքան շոք եր՝ ել մի ասի.  
Արի տես վոր՝ փաղիշահը գնաց վորսի:

Բայց փաղիշահն ու շահ-գաղեն արև-բոցին  
Չգիտացան. վերնաշորերն հանեցին:

Նոքարն առավ շորերն ուսին, կամաց-կամաց,  
Նրանց յետքից խոր ախ քաշեց ու գնաց:

Շահը ուզեց, վոր մըթամ թե հանաք անի  
Նոքարի հետ. շահ-գաղեն ել՝ ականջ անի:

Ու յեա դարձավ, ու յերբ յեկան իրար քով—  
Նա նոքարին այսպես ասաց հեզնանքով.

«Վրադ, ասես, բարձեկ ես մի իշարեո»:  
Նոքարն իսկույն նկատեց սուր, անտարբեր:

— Իմ մագերը տես վոր իշի մագ չեն իսկի.  
Իսկ իմ բեռը՝ բեռն և իշի և իշուկի:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՈՒ ԿՈՎԻ ՅԵՎ ԱՌՅՈՒԾԻ

Կանաչադարդ արոտներում յերկու կով  
Առույգ-զվարթ, գիշեր ու գոր իրար քով

Շրջում եին, միշտ արածում անբաժան,  
Մի որ առյուծն ագահորեն ու դաժան

Մոնչալով, իրիկնամուտ հովերին,  
Ուղեց մեկեն պատառոտի կովերին:

Կովերն իսկույն ոսգմական զիրք կառուցին—  
Հետույք-հետույք, պողերը դեմ առյուծին,

Կովի յերան որհասական այդ ժամին  
Ու միացած հետ մղեցին թշնամին:

Ուժի առաջ առյուծն անդոր ու սնանկ—  
Փորձեց խաղաղ միջոցը հին, խորամանկ:

«Կանաչ խոտեր որոճացող սվ դու կով,  
«Թե վոր թողնես ընկերուհուդ, գաս իմ քով:—

«Մարեր ու ձոր, ծաղիկ ու ցող կտամ քեզ,  
«Յեզ կյանքդ դու իզուր ինչ՞ու վտանգես,

«Կամ խոնարհես գազան ու մարդ հայվանին,—  
«Թող քեզ վերա միշտ լինի իմ հովանին:

Հիմար խելքով հաղիվ թե կով ձամբի դար,  
Կո՞վն ընկերին դավաճանեց ապիկար:

Առյուծն, անշուշտ, հենց իրիկվան հովերին  
Պատառոտեց այն որ բաժան կովերին:

Ո ընչս մտքիս և աչերուս շողածիր,  
Պատմությունիս իմաստը դու հասկացիր:

Թե ոուս, թե հայ, ֆրանցուդ, վրացի կամ թե հույն—  
Յեզիր յերկրիդ ժողովրդին միագույն:



4084

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

յերև

Կենսագրութիւն . . . . . 5

Մուլան ու Հաջին . . . . . 11

Չորան ու Մուլան . . . . . 15

Տուլարների արկածները . . . . . 17

Մուշակիդն ուսումից վերադառնում և հայրենիք . 20

Հիմար դազին . . . . . 25

Մարդիկ գանգատով գնացին յերկինք . . . . . 27

Տգեա գյուղացու կաշառքը Ասծուն . . . . . 30

Աստղագետ, վոր կինը գտավ ուրիշի հետ . . . . . 34

Շահն ու այգեպան . . . . . 36

Փաղիշահի հանաքը նորարի հետ . . . . . 37

Պատմութիւն յերկու կովի և առյուծի . . . . . 38



« Ազգային գրադարան



NL0381822

73.830

